

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՅՈՒ ԱՆՏԻՊ ՆԱԽԱՆՆԵՐԻՑ

Հայ աղանավոր բանասեր Նորայր Բյուզանդացու նամակագրությունից առանձին հետաքրքրություն են ներկայացնում պատմաբան-հնագետ Խաչատուր (Քուչուկ) Հովհաննիսյանցին (1852—1919) ուղղված նամակները, որոնք առնչվում են ժամանակի հայագիտությանը հուզող հարցերին և պարունակում են կարևոր տվյալներ Ն. Բյուզանդացու կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Ստորև ներկայացնում ենք 9 նամակ, որոնց բնագրերը գտնվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Խ. Հովհաննիսյանցի ֆոնդում:

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Ա. Գ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ:

1

Ստորհում, 15, Fredsgatan

4 հուլիսի 1898

Մեծապատիվ Տեր Խաչատուր Հովհաննիսյանց,

Ընկալա զՁեր հանձնարարյալ թուղթն հունիս 10 (հ. տ.) թվականավ, և հույժ շնորհակալ եմ որ նվաստիս հրատարակելի Նախնի՛ մատենին համար ազնվաբար կր ինդակցիք և կատարյալ հաջողություն կր մաղթեք:

Հույժ շնորհակալ եմ նույնպես որ հաճեցաք հղել ինձ օրինակ մի Եղիշեի Պատմութեանն² հրատարակելու Ձեր պատվական աշխատությունը: Քաջահույս եմ որ աշակերտք պիտի օգտին մեծապես ի ծանոթությունցն և ի բառարանեն զոր կցեր եք ի վերջ մատենին:

Եղիշեի հալլեալլ ձեռագրաց ընտրել զհարազատն և զհավաստին՝ շատ դժվար գործ է: Դուք, Մեծապատիվ Տեր, առաջնորդ առեր եք զԱնձեացյաց օրինակն, թեպետ առանց լիուլի վստահության, ինչպես կրսեք ի թղթիդ: Իրավունք ունիք: Արդարև Անձեացյաց օրինակն հնագույն է Եղիշեի ծանոթ ձեռագրաց. բայց ամենայն ձեռագրի հնությունն՝ բավական երաշխավորություն չէ բնագրին հարազատությանն, ինչպես վաղ գրեցի հիմ՝ Տեղեկութիւնս ի Ստ. Ասողիկ³, Այն սխալ ընթերցվածք՝ որ կր գտնվին ի հրատարակությունս Մխիթարյանց Վենետիկ, կր գտնվին մեծավ մասամբ և հանձեացյաց օրինակին:

Խորեն Գալֆայան սլարտեր լիով տեղեկացնել զմեզ նախ նկատմամբ սրբ Չառուայթ անձին (անդդիացի՞ էր, ամերիկացի՞, ի՞նչ էր յուր անվան բնիկ ուղղագրությունն). ապա թե՛ ո՞ւր ստացած էր Չառուայթ գայդ ձեռագիր և որ երկիր պիտի տաներ: Հանդուցյալն Schrumph⁴, որմե տեղեկություն խնդրեցի զՉառուայթե, հետ բաղում խույզ և խնդիր առնելո՞ւ ոչինչ կարաց ասել հիս: Հետո արժան էր առնուլ ի համեմատություն զլավագույնն ի հրատարակությանց Եղիշեի (մեծագիր տպ. Վենետիկ, 1859), ինչպես Դուք բրած եք, և զնել մանրախույզիվ զսորա տարրեր ընթերցվածս, որ բաղում ուրեք ընտրելագույն են քան զԱնձեացյաց օրինակին, և ըստ այնմ՝ արժանի նախամեծար լինելու Առնունք միայն ի հատուկ անվանց զԹաանիստ և զՎաւրդես (տպ. Գալֆայանի, 103, 285), Արդ ի տպ. Վենետիկ, 1859, առաջինն զրյալ է Մախանիստ (երես 52),

համեմատ այլ բնտիր ձեռագրի զոր էս տեսած էմ, և ինձ ուղղագույն թվի քան զՄխանիստ (Մախանիստ էր ի գավառին Արշամունյաց. ի Մախանեստայ կամ ի ծախնեստայ էր Հոհան Մանդակունի, և ոչ ի ծախնեստայ): Երկրորդն գրյալ է անդ Վատգիտս (երես 139), նույնպես համեմատ իմ տեսած ձեռագրիս. Վատգիտս շատ ավելի մոտ է ուղիղ գրությանն Վատգես, քան թե Վարդէս. (Վատգիս, պարսկերեն Պատղիս, Badghis, է նահանգ այժմու Ափղանաստանի, ի հյուսիսո Հրեա (Hérat) քաղաքի, տես փյուշք. Յ դ նշ., ի Պարսկերեն-հայերեն բառագիրս Բեորգա Տեր Հովհաննեսյան, տպ. Կ. Պոլիս, 1826. տես և յԱյրարատ Ալիշանի, երես 103 բ և ծան. 7): Այսպես և այն հատածն «արժանի եղև առնույ զկատարեալ նահատակութեանն պսակ» (տպ. Գալֆայանի, 185), զորմե կրսեք թե ի ձեռագրին Կոնիբիրի է նահատակութիւն, նույնպես ի տպ. Վենետկո, 1859, է նահատակութիւնն (երես 92), նույնպես և ի ձեռագրին զոր էս տեսած էմ՝ նահատակութիւն: Այնպիսի անիմաստ հրատարակությամբ՝ որպիսի է Գալֆայանին՝ իբրև զիս օգտածարավ բանասերք չկարին զոհ լինել. ինչպես և ոչ Մխիթարյանց 1859ի տպագրությամբ, հորում շատ փոփոխութիւնք կան մի քան զմի կարևոր և պատվական, բայց հրատարակիչքն՝ ազահք ի տեղեկացնել զհասարակութիւնն ինչպես միշտ՝ ավելորդ համարած են ծանուցանել թե հոր ձեռագրն են այդ նոր բնիքիցվածք: Մասնավորապես եպերելի է Գալֆայան՝ որ երես 151 վերնագիր կը դնե «Հինգերորդ յեղանակ. յարձակումն Արեւելեայց»։ մինչդեռ այլ ամենայն ձեռագիրք Եղիշեի կը մակագրեն զայն «վեցերորդ յեղանակ. կրկին անգամ ընդդեմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից», և խառն կը գրեն զբանսն «Յետ այսորիկ իբրեւ էտես» որ երես 179, իբրև մասն վեցերորդ եղանակին (տես փոքրադիր Եղիշե, տպ. Վենետկո, 1828, ծան. երեսս 380—381): Անհրաժեշտ կարևոր էր ծանուցանել թե իրոք կայի՞ն հանձնվացյաց օրինակին Հինգերորդ և Վեցերորդ եղանակքդ յուրյանց հատուկ վերնագրովք. քանզի այլ ամենայն ձեռագիրք այնպես իմն կարծել կուտան մեզ՝ թե Հինգերորդ եղանակն դուրս ընկած է ի մատենեն Եղիշեի (արդյոք խարդախությամբ Բարձումայի՞, զոր կավանդե Թովմա Արծրունի): Ավասիկ խնդիր մի՞ որ կարծեմ ոչ երբեք պիտի լուսավորի, ցորչափ ոչ ոք գիտե Սրբ Չառուայթի ո՞վ և ո՞ր լինելն, և Գալֆայան չէ հայսմ աշխարհի որ տեղեկացնե զմեզ:

Հղեցի Ձեզ այսօր օրինակ մի հիմ գրութենեն De l'Urgence և օրինակ մի Հայկական Բառաբանութիւն, առանց հանձնարարելո. հուսամ կը հասնին ի ձեռսդ: Հաճեցեք ընդունել իբր նվեր:

Խորին մեծարանոք

Խոնարհ ծառա Նորայր Ն. Բուզանդացի

N. de Byzance Norayr

15. Fredsgatan

Stockholm (Suède)

2

Ստոքհոլմ, 3 Բ. Arsenalsgatan

2 նոյեմբեր 1900

Մեծապատիվ բարեկամ

Տեր Խաչատուր Հովհաննիսյանց.

Ի 25 սեպտեմբերի ընկալա զՁեր պատվական թուղթն սեպտեմբերի 7ին (հ. տ.), հորում կը ծանուցանեիք թե ստացածդ եք օրինակ մի հիմ Կորիւն վարդապետէ՞, և թե հղած եք մատենախոսական հոդված զերկասիրութենես առ

Նոր-Դար. «Երբ հոգվածս լույս կտեսնե՝ անմիջապես մի օրինակ Նոր-Դարի կուղարկեմ ձեզ», կրսեիք միանգամայն ի նամակիդ: Մինչդեռ ես օրե օր անձկանոք կը սպասեի խոստացելուդ՝ փափագելով լուսավորիլ ի գրածներեդ, երեկ ընկալա զՀանյես Ամսօրյայի նոյեմբերի թիվն և Նոր-Դարի քաղվածոց մեջ տեսա որ վաղ իսկ հրատարակյալ է մատենախոսականդ: Նույնպես երեկ ընկալա զթուղթդ հոկտեմբերի 14ին (հ. տ.), հորում կրսեք. «Կորյան մասին ես գրեցի մի ընդարձակ մատենախոսական հոգված Նոր-Դար լրագրում. եթե կարդացած չեք, գրեցեք ինձ և ես կուղարկեմ Ձեզ հիշյալ հոգվածս»: Ես Նոր-Դար չեմ ընդունիր, և շատ շնորհակալ կըլլամ եթե բարեհաճիք հղել ինձ անհապաղ զհոգվածդ: Վաղագույն պատասխանած էի Ձեր առաջին նամակին, եթե ընդունած ըլլաի զՆոր-Դար, ներեցեր ակամա հապաղմանս:

Շատ բարի և շատ աղնիվ եր որ ինձ նման արհամարհյալ և անարգյալ մատենագիր մի արժանի կը համարիք ծանոթացնել Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերության:

Ծնած եմ ի Պերա Կոստանդնուպոլսի ի 4/16 մարտի 1845: Հաշնան 1854 զնացած եմ ի Վենետիկ ի վանս Ս. Ղազարու Մխիթարյանց, և 1857են ի վեր մասնավոր Լոանդյամբ պարապած եմ հայերեն և գաղղիերեն լեզվաց ուսման: 1866—68 ամաց մեջ ուսուցիչ եղած եմ հայերենի և գաղղիերենի ի Ռափայելյան վարժարանին ի Վենետիկ, հայն ժամու անունս էր Հ. Հարություն Թերզոնց: 1870—72 ամաց մեջ վարժապետած եմ ի Մխիթարյան վարժարանին որ Քաղկեդոն (Գատը-Քեոյ): 1876են ի վեր կը կոչվիմ Նորայր Ն. Բյուզանդացի, Néandre (Norayr) de Byzance, 1881 հունիսի 18ին ամուսնացած եմ ի Կ. Պոլիս ընդ շվեդացի օրիորդին Selma Jacobsson, որ էր արքունի լուսանկարիչ ի Ստոքհոլմ: 1882ի դեկտեմբերեն ի վեր կը բնակիմ ի Ստոքհոլմ, միակ պարապմունք ունելով զուսումնասիրություն հայ լեզվի (arménien classique, arménien de décadence et dialectes arméniens) և գրականություն:

Հրատարակած եմ.

1. Հայկական Բառաբանություն, Կ. Պոլիս, 1880 (ընկալա 500 փրանկ հիդմիրյանց մրցանակեն):

2. Քննադատություն նուպարեան քարգմանութեան Վիկտոր Հիլզոյի Notre-Dame-ին. Կ. Պոլիս, 1884 (եթե չունիք՝ կը հղեմ Ձեզ):

3. Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն (սիրելի կնոջս 15000 ֆրանկի նպաստավորությամբ), Կ. Պոլիս, 1884.

4. Քննասէր. Պրակք Ա և Բ (ծախութ սիրելի կնոջս), Ստոքհոլմ, 1887, վիմագրությամբ (սլիտի հղեմ Ձեզ):

5. Տեղեկութիւնք ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տառանեցոյ Ասողիկ կոչեցելոյ (հանյալ ի Գրականական և պատմական հանդես Մոսկվայի). Մոսկվա, 1889.

6. De l'Urgence d'une édition critique des textes arméniens, հրատարակյալ ի Հոռվմ, 1892, ի պրակս (Actes) Արքունի Ակադեմիա dei Lincei. (Եթե չունիք դայս, կարեք տեսնել առ մեծ. տ. Լեոնի Մսերյանց, ինչպես նաև զթիվսն 2 և 4, մինչև որ հղեմ Ձեզ):

7. Կորիւն վարդապետ և այլն, զոր արդեն գիտեք:

Հրապարակած եմ բազում հայագիտական հոգվածներ, նախ ի Բաղմավիպի (1867, Հ. Յ. Թ. ստորագրությամբ), ապա ի հայ լրագիրս Կ. Պոլսի, Մասիս, Փունջ, Թերնեմյանը Էֆյար. գիտեք զգրածներս ի Մշակի. գիտեք անշուշտ և

գրածս ի Լումայի, 1896, հունիս, Յառաջաբան Պատմութեանն Ղ. Փարպեցու: Գրած եմ շվեդերեն հոգւածներ յ' Aftonbladet ե ի Stockholms Dagblad լրագիրս Ստոքհոլմի, մերայնոց արտասովելի կոտորածներուն առթիւ. հոգւածոցս արդյունքն եղաւ 2000 կրունա (= 1000 ռուբլի) ստանալ ի շվեդացւոց ի նպաստ որբոց ե այրիաց, ե դրամն հղւեցաւ ի Լոնդոն առ duc de Westminster. Բանասիրի վերջին (հոկտեմբերի) թվույն մեջ ունիմ հոգւած մի՝ զոր հուսամ հաճությամբ պիտի ընթեռնուր. Գրիգորի Մագիստրոսի գամագտական թղթին մեկնութիւն ի հմին իսկ ի Մագիստրոսէ: Քննդատորեն սրբագրած ե հարդարած եմ զայն ամենայն նախնայց տպագրյալ մատենագրությունս զորս կրցած եմ հաւաքել, մասնավորապես զպատմիչս, Ագաթանգեղ, Բյուզանդ, Խորենացի, Փարպեցի, այլովքն հանդերձ: Թղթակցած եմ ընդ Littre-ի⁶, զորո Յ նամակս հրատարակած եմ ի գլուխ բառարանիս. հաղորդած եմ այլեայլ ստուգաբանութիւն բառից, հորոց մեծանուն լեզվագետն հրատարակած է ինն հատ իմ անվամբս (M. Néandre N. de Byzance, arménien) յ' Additions յոր supplément-ին, Paris, 1877, ընդունելով զիմ կարծիս, տես անդ Barbiton, Boucassin, Caraque, Carnal, Cendal, Chat, Chebec, Gulipot, Occonète. ձեռագիր երկասիրութիւնքս շատ են, վասն որո զանց կընեմ նշանակել մի ըստ միոջն:

Շնորհակալ եմ Հայերը մարդաբանական ե աշխարհագրական տեսակետից հրատարակությանդ, զոր ախորժելով կարդացի:

Դաղդիերեն-հայերեն բառարանս ոչ մի շահ բերած չէ ինձ, ե ես կը փափագիմ հետ ստանալ զլուսահոգի կնոջս 15000 ֆրանկն: Մեծապես երախտապարտ կը մնամ Ձեզ եթէ Բարիհաճեք հանձնարարել զբառարանս Ռուսաստանի Հայ դպրոցներուն ե գրասեններուն: Խորենացւո ընդհատյալ Ուսումնասիրությանս մասին կը գրեմ Ձեզ ուրիշ անգամ:

Խորին մեծարանոք մնամ պատվական ուսուցչապետիդ:

Խ. Ժ. Նորայր

3

Ստոքհոլմ, 3 B, Arsenalsgatan

23 նոյեմբեր 1900

Մեծապատիվ րարեկամ

Տեւ Խաչատուր Հովհաննիսյանց.

Ընկալա զՁեր պատվական հոգւածն ի Նոր-Դարի. ե մեծապես շնորհակալ եմ ե ուրախ՝ որ Կորիւն վարդապետ երկասիրութիւնս արժանացեր է Ձեր նպաստավոր դատաստանին: Ինչպես գրած եմ ի հաւելւածի հառաջաբանիս՝ դիտավորութիւնս էր ոչ միայն ընդարձակել զհառաջաբանս այլե հաւելուլ նոր դիտողութիւնս, տեղեկութիւնս ե լուսաբանութիւնս. կուգեի մասնավորապես նշանակել թե ինչ պատճառներ ե փաստեր ունիմ որ Ագաթանգեղ ե Բյուզանդ թարգմանչալք են ի Կորյունն հետ հորինման վաւրուցն Մաշտոցի: Սիրելւոյս⁷ ողորմ մահն մեղակտուր բրաւ զիս, ե ամիսներով մնացի կիսակենդան վիճակի մեջ. այժմ իսկ չեմ քաջառողջ, ջղային սաստիկ տխրութիւն ունիմ: Նրկորոց տպագրության կը հուսամ կատարելագործել զերկասիրութիւնս՝ որչափ որ կարելի է ի Ստոքհոլմ կատարյալ զործ մի ընծայել հայ մատենագրության այնպիսի ծանր խնդրո վերա: Մոռացած չեմ նաե զխորենացի. Սովսեա Խորենացի

և Կարիերյան վերնագրի տակ պիտի ըսեմ ընդարձակորեն թե ինչպիսի՝ անհնարությունք կան զհորենացի Ը կամ Թ դարու մատենագիր համարելու:

Երկու ամիս առաջ վեհափառ կաթողիկոսն շատ սիրալիր նամակով հրավիրեց զիս էջմիածին առ ստանձնել զգործ վերակացության Աստվածաշնչի տպագրության⁸: Կը սպասիմ հոգևոր Տյառնն Երկրորդ նամակին:

Եթե չունիք զիմ Քննադատութիւն հայ քարգմանութեան Notre-Dame-ին, կը հղեմ զայն ընդ Քննասիրի:

Կրկնելով զիմ շնորհակալությունս, մնամ ամենայն մեծարանոք պատվական ուսուցչապետիդ

խ. ծ. Նորայր

4

Ստոքհոլմ, 3 B. Arsenalsgatan
29 նոյեմբեր 1900

Մեծապատիվ Տէր Խ. Հովհաննիսյանց,

Այս առավոտ ընկալա զՁեր պատվական թուղթն նոյեմբերի 11ին (հ. տ.), և կը փութամ մատուցանել Ձեզ զիմ ջերմ շնորհակալություն բանաստեղծականդ համար: Երբ Մշակի մեջ մանրամասնաբար գրեցի⁹ թե փոքր Սոկրատ տն օգտված է ի հորենացվո, ո՛չ թե հորենացի ի փոքր Սոկրատա, Դաղբաշյանն անգոր անվանեց զիմ գրածներն, բայց թե հորո՞ւմ անգոր էին՝ ոչ ինչ ըսավ: Այժմ կը լսեմ ի Ձենք թե տ. հալաթյանց ոչ ինչ արժանիք չէ գտած իմ «Կորին վարդապետ» գրքի մեջ. շնորհ ընե տ. հալաթյանց ցուցընել թե ինչու իմ երկասիրությունս ոչ ինչ արժանիք չունի. Եթե հաղթահարվիմ, հրապարակավ կը խոստովանիմ զիմ տգիտություն: Ես իմ չափովս փաստեր հառաջ բերած եմ առ ի հաստատել իմ կարծիս. փաստերուս ղեմ փաստս կը պահանջեմ, և առանց պատճառաբանյալ հերքմանց՝ լոկ վճռել թե իմ երկասիրությունքս անգոր են, ոչ ինչ արժանիք չունին, ոչ զիս կը համոզե, ոչ զանկողմնակալ և ողջամիտ անձինս:

Կը սպասիմ լսել ի Ձենք Notre-Dame-ի քննադատության մասին, որպեսզի եթե չունիք՝ հղեմ ընդ Քննասիրի: Դարձյալ կաղաչեմ որ բարեհաճիք հանձնարարել զիմ՝ Դաղդու-հայերեն բառագիրս, զի սրտիս ամենամեծ փափագն է հետ ստանալ զՍիրելիվույս դրամն՝ որով կարողացա ի լույս ընծայել զբազմածախ հրատարակությունդ:

Խորին մեծարանոք մնամ Ձերդ

Նորայր

5

Ստոքհոլմ, 22 դեկտեմբեր 1900

Մեծապատիվ բարեկամ

Տէր Խ. Հովհաննիսյանց,

Ընկալա զՁեր պատվական թուղթն նոյեմբերի 22 (հ. տ.) և ամսույս 17-ին հղեցի Ձեզ զ՝Ա և Բ պրակս Քննասիրի և զՔննադատութիւն Notre-Dame-ի: Չունիմ զՄկ. էմինի «Մ. հորենացի և հին հայկական վէպ», և ուրախ կըլլամ եթե հաճիք հղել ինձ:

Շատ հետաքրքրվեցա Ն. Մառի նոր դյուտովն, Եփրեմի ասորական բնագիր հայ նշանագրերով գրված յժԳ դարու Ի՛նչ գանձեր կան ծածկված թաղ-

ված: Երբ ի լույս ալիտի ելնին մեր գրականության բոլոր թաքուն հարստու-
թյուններն:

Սիրո և մեծարանաց ողջունիվ մնամ Ձերդ

Նորայր

6

Ստոքհոլմ, 3 B, Arsenalsgatan
19 փետրվար 1901

Մեծապատիվ բարեկամ

Տե՛ր Խ. Հովհաննիսյանց,

Ընկալա զպատվական թարգմանությունդ «Մ. Խորենացի և հին հայկական
վէպ», և գնոր-Դարի թիվն 21 նոյեմբերի 1900 որում հրատարակված Ձեր գե-
կուցումն: Մեծապես շնորհակալ եմ ազնվությանդ: Անձկանոք կը սպասեմ հա-
լաթյանց ուսուցչականի գրավոր առարկությանցն ընդդեմ Կուրիւն վարդապե-
տիս, որպես զի կարողանամ քննել և պատասխանել:

Հուսամ ընդունած եք զՔննասիրի երկու պրակս և զՔննադատութիւն
Notre-Dame-ի թարգմանություն:

Ըստ Մ. էմինի՝ խարդախ ոմն է Խորենացի: Կը հուսամ օր մի լիովին հերքել
զայդ կարծիս: Այժմ այսչափ միայն կըսեմ որ հերես 20 Մ. էմին կը համարի
թե Խորենացի գործած է «ժամանակագրական վրիպակ»: Ձիք բնավ այդպիսի
«վրիպակ» ի զիրս Խորենացվո: Մարիբաս հետ թարգմանելո զՀայկազանց
պատմություն հայնմ մատենն որ հրամանավ Աղեքսանդրի փոխյալ էր ի քաղ-
ղեարենն ի հունարեն, հավելցուցած է և զգիրս Վաղարշակա յուր ժամանակա-
ցին, ապա և զգործս Արշակա նորին որդվո: Զայդ հավելվածս Մարիբասսա
յարգմանած է Խորենացի յուր Բ դրոց Գ-Բ՝ զլիսոց մեջ, և ուր կըսն ի կատարած
Բ զլիսոյն, «Աստանար սպառին բանք ծերունւոյն Մարիբաս Կատինայ», ըսել
կուզե թե կը սպառին Մարիբասսա հավելվածն:

Խորին մեծարանոք Ձերդ

Նորայր

7

Ստոքհոլմ, 3 B, Arsenalsgata
26 մարտ 1901

Պատվական բարեկամ

Տե՛ր Խ. Հովհաննիսյանց,

Ընկալա զթուղթդ փետրվարի 19-ին (հ. տ.), և շատ ցավեցա որ հիվան-
դությամբ տառապեր եք հանդերձ ընտանյոք: Կը հուսամ որ այժմ քաջառողջ
եք, և կը մաղթեմ որ Աստված պահէ զՁեզ միշտ: Ինչպես գիտեք, Կարիերի և
Կարիերյանց գրվածներն Խորենացվո մասին՝ բոլորովին հակառակ են իմ
կարծյացս: Մեծապես վշտացած եմ որ Վիեննայի Հարք այնչափ կարևորու-
թյուն տվին Կարիերի հարևանցի քննությանց: Ամսօրյա Հանդիսի այժմու տաղ-
նապին մեջ լավագույն կը համարիմ դեռևս լուել, և կը զբաղիմ Դաշանց քղթոյն
պատմական և բանասիրական քննությամբ, հանդերձ նոր հրապարակությամբ
բնագրին: Սիրով պիտի ընթերցեմ ի Բանասիրի զմատենախոսությունդ Ն. Մա-
ռի և Տ. Լ. Մսերյանցի վերջին գրվածոց մասին:

Հղեցի Ձեզ այսօր զիմ կենդանագիրն զոր լուսանկարած է սիրելի կինս.
ընդունեցեք զայն իբրև գրավական իմ բարեկամության, և հաճեցեք հղել ինձ
16 Հանդես, № 3

փոխարեն զՁերդ, զի չգիտեմ թե ե՞րբ բախտ պիտի ունենամ տեսնել զՁեզ երեւոյթ:

Սիրո և մեծարանաց ողջունիվս իմ

Ձերդ նորայր

3

Stockholm, 3 B. Arsenalsgatan
Ստոքհոլմ, 21 սեպտեմբեր 1901

Պատվական և սիրելի բարեկամ

Տեւ Խ. Հովհաննիսյանց.

Ներողամիտ եղեք որ այսքան հապաղեցի Ձեր ապրիլ 24ի (հ. տ.) հմտալից նամակին պատասխանել: Հապաղմանս պատճառն այն էր որ օրէ օր կը սպասեի կենդանագրիդ զոր խնդրած էի մարտ 26ի նամակովս, և զոր ցարդ չընկալա:

Փաւստոսի Բյուզանդա Պատմութեան մեջ երկու այլեայլ գրիչ նշմարելովս՝ համարած չեմ և չեմ համարիր որ այդ երկու գրիչներդ միանգամայն հորինած են զգիրսդ, ինչպես էրկման և Շատրիան գյուրյանց վիպասանութիւնս: Իմ կարծիքս այն է որ նախ հույն Բյուզանդն, այսինքն Բյուզանդացին, գրած է զՊատմութիւնդ, և իրեն վերագրելի են այն լկտութիւններն որոց կը հանդիպինք աստ և անդ ի մատենին. հետո Ասորի վանական կամ եկեղեցական ոմն, ուզելով բարկոբել կամ մեղմացնել զլկտութիւնսն, հավելցուցած է հոգևորական խորատներ, հրաշքներ, և հասորի լեզվույն թարգմանած է Կորյուն ի հայերեն: Կարելի էր Կորյուն վարդապետի վերագրել զհոգևոր մասունս Պատմութեանն. բայց որովհետև շատ հաշտին նշաններ կան ասորվո ձեռնամխութեանն ի Բյուզանդ (ասորական հիշատակք, ասորաբանութիւնք), ինձ հավանական թվեցավ զԱսորի ոմն համարել վերստին հարգարիչ գրոցն Բյուզանդա: Փարպեցի ևս նկատած է զԱսորի ոմն. բայց ըստ Փարպեցվո՝ Ասորին է լկտեբանն, մինչդեռ ըստ իս՝ Ասորին է հոգևորն: Զիարդ և է՝ ուղիղ չէ գեր. Այտնյանի ըստին Բյուզանդա համար, թե «բովանդակ մատչանն ավելի զվարճացնել դիտած կերեալ քան թե հավատացնել»։ Քննասէր. երես 59: Իսկ Գաթրճյանի կարծիքն թե Փաւստոս Բյուզանդ պատմագիր գոյութիւն ունեցած չէ, և թե հինգերորդ դարու Սահառունի նույն է որ մատենագրած է զՊատմութիւն Հայոց և Փաւստոսի Բյուզանդա անվամբ զարդարած, շատ անհեղեղ կարծիք է: Այդ «հինգերորդ դարու Սահառունի»դ Սահակ և Մաշտոցի աշակերտ մի միայն կարելի ենել. իսկ այլ՝ մենք հավաստեցավ գիտենք որ Սահակ և Մաշտոցի թե՛ առաջին և թե՛ երկրորդ աշակերտներն հոգեկրոն սրբակրոն մարդիկ էին առհասարակ. ի՞նչպես կարելի է դոցա վերագրել այնպիսի անպարկեշտ դիրք, ինչպիսի է Բյուզանդ:

Ստոկհոլմ է, որ նաև տ. Գր. Խալաթյան հրատարակած է զհայերեն թարգմանութիւն Մ. էմինի «Մ. Խոր. և հին հայկական վէպ» գրութեան, և հառաջ քան զՁեզ թե հետո: Դիտե՞ք արդոյթ թե ո՞վ է Հովհ. Հովնանյանի «կարծված բարեկամ»ն՝ զոր կհիշատակե Ստեփանե յուր աշխարհաբար Խորենացվո առաջին տպագրութեան Ե երեսը, ուր գրված է «երջանկահիշատակ Հովհաննես Հովնանյանի հիշատակին»:

Եթե ունիք Խորենացվո վերա հրատարակյալ գրվածներ (զաղդիերեն), շատ շնորհակալ կըլլամ եթե բարեհաճիք փոխ տալ ինձ, զոր օրինակ, Վ. Լանդլուայի

Études sur les sources de l'Hist. de M. Kh., հրատարակյալ ի Bulletin de l'Acad. des sciences de St-Petersbourg (n°ր տարին), tome III, p 531—583. (տես ի նորին Collection և այլն, հ. Բ, երես 48ա, ծան. 8, և երես 51ա, ծան. 3. այս է զոր Աղաբեկյան և Պալասանյան հրատարակած են ի Տփղիս, 1860, 1863, հայերեն, և նորեն Լանդուայի գրածն ի Melanges asiatiques (Avril, 1861), p. 293. A suivre (տես ի նորին Collection, հ. Բ, երես 51ա, ծան. 3):

Սիրո և մեծարանաց ողջունիլս մնամ

Նորայր

9

Stockholm, Ստոքհոլմ, 3 B, Arsenalsgatan Suède

2 փետրվար, 1902

Պատվական և սիրելի բարեկամ

Տեր Խ. Հովհաննիսյանց,

Բնկալա զՁեր հունվարի 5ի (հ. տ.) թուղթն, միանգամայն և զBulletin de l'Acad. Imp. des sciences de St.-Petersbourg, t. III, № 8, որում է Վ. Լանդուայի հոդվածն Étude sur les sources de l'Hist. d'Arm. de M. de Khorèn. Անշափ շնորհակալ եմ ազնվությանդ: Քանի մի ամսե ի վեր սկսած եմ պատրաստիլ Մովսես Խորենացի, մատենագիր և թարգմանիչ, գործ ընդարձակագույն քան զԽորին վարդապետ, և որ 4—5 տարիեն հաղիվ կրնա հասանել հավարտ: Այս գործույս մեջ պիտի քննեմ ինչ որ ըսված է ընդդեմ Խորենացվո՝ Վիստոնյանց հրատարակութենեն ի վեր: Ի հավելվածի պիտի հրատարակեմ in ekstensu ինչ որ գրյալ է զԽորենացվո, նպաստավոր կամ աննպաստավոր: Ուրիշ անգամ պիտի հաղորդեմ Ձեզ զցանկ գրվածոցն որ ծանոթ են ինձ, խրնդ-բելով որ հավելուք և զՁեր գիտցածներն: Խնդրեմ ըսեք թե ո՞րչափ ժամանակ կարիմ պահել առ իս զՁեր Bulletin. պիտի ընդօրինակեմ զայն ամբողջապես: Լանդուայի սույն գրվածն է զոր Մարկոս Աղաբեկյան թարգմանած և հրատարակած է ի Տփղիս 1860, և զոր համին 1863 նորոգ թարգմանած և հրատարակած է Ստեփան Պալասանյան, նույնպես ի Տփղիս: Ունի՞ք զայս երկու թարգմանությունս: Ի՞նչ է Լանդուայի հրատարակածն ի Melanges Asiatiques, t. IV, pages 293—368:

Շնորհակալ եմ Հովհանյանի մասին տված տեղեկությանցդ: Բայց կաղաչեմ որ ըսեք ինձ, եթե գիտեք, թե ո՞վ կ'ակնարկե Ստեփանե (Ա տպ., երես Ե), Լրբ կրսե. «Մահանալուցդ օգուտ քաղեց, յուր անձնական կիրքը գոհացնելու համար, քո կարծված բարեկամդ, որին մահիցդ երկու օր առաջ ուղարկել էիր տղազրության համար բոլոր գումարը» և այլն:

Ես ևս կը մաղթեմ Ձեզ շնորհավոր նոր տարի, և ի սրտե կը փափագիմ, որ Աստված պարգևե Ձեր Սիրելիվոյն առողջություն և Ձեզ զորություն, և երկուցունցդ միանգամայն կատարյալ երջանկություն:

Խորին հարգանք

Նորայր

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսրը Ն. Բյուզանդացու «Նախնիք» կոչված ձեռագիր աշխատության մասին է, որտեղ քննության են առնված հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ գործածված բազմաթիվ բառեր՝ աղավաղված գրիչների կամ հրատարակիչների կողմից: Աշխատության մանրաժայգիներ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում:

2. Նկատի ունի Խ. Հովհաննիսյանցի կողմից 1892 թ. Մոսկվայում լույս ընծայված Եղիշեի «Պատմութիւն Վարդանաց» երկը, որն օժտված է հմտալից ծանոթագրություններով և հայոսերեն բառարանով:

3. «Տեղեկութիւն ի գիրս Պատմութեան Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողիկ կոչեցելոյ («Հանդես գրական և պատմական», 1889):

4. Շոումպֆ Գուստավ Ադոլֆ (1844—1892) — գերմանացի հայագետ:

5. «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք» (Տփղիս, 1900):

6. Լիտրե էմիլ (1801—1881) — ֆրանսիացի բանասեր, փիլիսոփա և բաղարական գործիչ:

7. Խոսրը Ն. Բյուզանդացու կնոջ՝ Սելմա Յակոբսոնի մասին է, որը մահացել է 1899 թ.:

8. Հիշյալ նամակը հրատարակված է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում (1972 թ., № 1, էջ 175):

9. Նկատի ունի իր «Հայերեն հին գրականության խնդիրներ» հոդվածը (Ա—Մովսես Խորենացի, «Մշակ», 1898, № 217):

ИЗ НЕИЗДАНЫХ ПИСЕМ НОРАЙРА БЮЗАНДАЦИ

Р. С. КАЗАРЯН, А. Г. ТЕР-СТЕПАНЯН

(Резюме)

В переписке видного арменоведа Норайра Бюзандаци особый интерес представляют адресованные историку-археологу Хачатуру Иоаннисянцу (1852—1912) письма, в которых затрагиваются злободневные проблемы арменоведения того времени и содержатся важные сведения о жизни и деятельности Н. Бюзандаци.

Письма хранятся в Музее литературы и искусства им. Е. Чаренца в фонде Х. Иоаннисянца.